ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<15>> ապրիլի 2024 թվական N 39-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N-286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգ»-ի 44-րդ կետի «Ը» - ենթակետով, հիմք ընդունելով 28.07.2023թ-ի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության թիվ N ՇԱԹ-29/711 «Օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլտվությունը», ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության թիվ N L-711 Լեռնահատկացման ակտը, «ՆԵՍՏԱ ՊԵՌԼԻՏ» ՍՊ ընկերության տնօրենի 22.03.2024թ-ի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 02-016-0220-0686 կադաստրային ծածկագրով՝ 12,199 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, Ընդերքի օգտագործման համար տրամադրված, գործառնական նշանակության հողամասը, վարձակալության իրավունքով տրամադրելու «ՆԵՍՏԱ ՊԵՌԼԻՏ» ՍՊԸ-ին:

2.«ՆԵՍՏԱ ՊԵՌԼԻՏ» ՍՊԸ-ի հետ կնքել վարձակալության պայմանագիր մինչև 28.07.2043 թվականը և փաստացի օգտագործվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան սահմանել 400.000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ վարձավճար, իսկ չօգտագործվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան սահմանել 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ վարձավճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդ օրվանից:

Կողմ-15	Դեմ-1	Ձեռնպահ-1
1. Արման Կարապետյան	1.Ղուկաս Հակոբյան	1.Վահե Եղիազարյան
2.Սարգիս Գրիգորյան		
3. Գեղամ Ղազարյան		
4. Սերգե Մկրտչյան		
5.Միհր Մարգարյան		

6.Ավետիս Մինասյան
7.Նելլի Մարգարյան
8.Գեղամ Սարգսյան
9.Նարեկ Գրիգորյան
10.Էմին Մկրտչյան
11.Մնացական Մնացականյան
12.Արմեն Գրիգորյան
13.Կարեն Գրիգորյան
14.Սարգիս Մուրադյան
15.Ալբերտ Հարոյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

ք. Թալին
15 ապրիլի 2024թ.